

ընդհանուր կերպարանք ստոնոլ չեն կարող, այլ պատշաճ միջացներով կուղղութեաւ ի վերջոյ՝ Հայոց եկեղեցական իշխանութեան բարոյական նշանակութիւն ժողովրդեան յօտ պակասեցնելով՝ քաղաքական իշխանութիւնն առաւել վաստակ չէ կարող ունենալ, ըստ որում նոյն է ազգեցութիւնն՝ բարոյական լինի այն կամ նիւթական. և որպատուդ ու արդիւնք սկսում է տեսնել ֆրանսիական հասարակութիւննա.

Ամենայն առարկութեանց վախճան տրուեցաւ, երբ խնդրեցինք Նորին Պայծառափայլութիւնից միջնորդել ուր հարկն է ոռուաց հօգեորականութեան տրուած ուսումնարանական հրահանգը տարածուի և հայոց վարժարանց վերայ. Թղթով դիմել առաջարկեց մեզ և արձակուեցանք. Զմուռանանք ասել, որ բոլոր խօսակցութեան միջոցին Շեպելի ներկայ գտնուելով և իւր հետ ունեցած խորհրդակցութիւնք ըստ գլխաւոր մասնց կրկնուեցան:

(Նարուհակելի)

Գ Ր Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՂՔԱՎ

ԳԼ. Ժ.

Կիւրակի պատարագից յետոյ խմբի անդամները, ըստ սովորութեան, հաւաքուեցան ընթերցարան. Ամենքը հետաքրքրում էին «Փարասում» հիմնած նոր գործի սկզբնաւորութեամբ և մեծ ուշադրութեամբ լսում էին առաջին ժողովի մասին արած պատմութիւնը. Յաջողութիւնը սպասածից աւելի էր. Ամենքը հաւատացած էին, որ գործը

կարող է յարատենլը ։ Շատերը ցանկութիւն էին յայտնում անձամբ մասնակցելու գործին։ Ամանք յայտնեցին իրենց պատրաստակամութիւնը «Փարոսում» հոգեոր համերգների համար երգիչների խռոմք պատրաստելու։ Բժիշկ Վեստը առաջարկեց իւր ծառայութիւնը ժողովի օրերին աղօթքից ու զրուցատրութիւնից յետոյ ձրիաբար ընդունելու հիւանդներին։ Աիրջինիա Պէջը յանձն առաւ Բարակում մի փոքրիկ դեղատուն հիմնել իւր ծախքով հիւանդներին ձրիապէս դեղեր բաժանելու համար։ Գործը ակնյայանի կերպով աճում էր։

Զորեքշարթի երեկոյեան Գրէյի բարակում տեղի ունեցած ժողովի մէջ, բացի Հռաքէլ Վինսլուուից, երգում էր արդէն մի մեծ և լաւ պատրաստուած խռոմք նոյն ընկերութեան անդամներից կազմուած։ Այդ երգիչների ներկայութիւնն անգամ՝ բարերար ազգեցութիւն էր անսում հաւաքուած ամբոխի վրայ։ Նրանք հասկանում էին, որ այդ մաքուր հագնոււած մարդիկ եկել էին այդտեղ ոչ թէ իրեւ պարոններ, այլ իրեւ եղբայրներ և այդ նրանց յուղում էր ու բաջալերում։

Ուղիղ Անկիւնի բնակիչներին ու շքեղ տպարանքների սեփականատէրերին բաժանող պատը յանկարծ բացուեցաւ և երեեցաւ, որ թէ այս և թէ այն կողմում ապրում են նոյնանման սիրտ ունեցող մարդիկ, որ նրանք կարող են հասկանալ իրար և նոյնիսկ սիրել միմեանց, խռոմքն ու Հռաքէլը հրաշալի կերպով երգում էին։ Պարզ էր, որ մարդիկ երգում էին ոչ միայն ձայնով, այլև հոգով և այդ հոգին լի էր սիրով ու կարեկցութեամք դէպի թշուառ ունկնդիրները։

Հինգհարիւրի չափ ամբոխի մէջ կատարեալ լուսութիւն էր տիրում։ Երբեմն լուսում էին ծանր, խոր հառաջանքներ։ Ամբոխի մէջ, մի անկիւնում, կանգնած էր Ռոլին Պէջը, նա երբէք այսպիսի բան չէր տեսել և խորապէս յուղուած էր։ Արցունքները դլորուում էին նրա աչքերից և դրանք ուրախութեան, խաղաղութեան, հոգու անդորրութեան արցունքներ էին։

Ռուլինի կողքին ծնկաչոք արտասուռմ էր մի ինչ որ ցնցոտիներով ծածկուած մարդ, թափառաշը ջիկի արագիշ նոզ, Դա «Մխոտածն» էր՝ նո այսօր միանգամայն զգաստ էր և նոյն իսկ աւելի մաքուր էր երեռմ. կարդի էր բերել, որչափ այդ կարելի էր, իւր ցնցոտիները, նորա մէջ մի մեծ փոփոխութիւն էր կատարուել. երկուշարժի օրուանից սկսած ոչ մի կաթիլ օգի բերանը չէր առել և այսօր եկել էր բարսկ ամենքից վաղ. իսկ այժմ, մի անկիւն քաշուած և երեսը ձեռքերով ծածկած, լալիս էր, ինչպէս լալիս են դառնապէս վշտացած փոքրիկ երեխաները:

Ռուլինին ու Մխոտածին ճանաչող կողմնակի դիտողի համար այդ երկու կողքի լացող մարդիկ յուղիչ պատկեր էին ներկայացնում, Մէկը՝ բարձր գասակարգի ներկայացուցիչ, միլիանատէր, թատրոնների ու ակմբանոցների մշտական յաճախորդ, միւսը՝ թշուառ դասակարգի ներկայացուցիչ, ցնցոտիներով պատած թափառաշը ջիկ, բանտի ու գինետան մշտական յաճախորդ, Մարդկանց սովորական աշխարհահայեացքի տեսակէտից նրանք կանգնած էին մարդկային սանդուղքի երկու հակառակ ծայրերում. նրանց մէջ մի անանցանելի վիճ կար, իսկ այժմ, այսուեղ՝ ժողովարանում, նրանք երկու հարազատ հոգեկից եղայլներ էին ներկայանում. երկուքն էլ լալիս էին անցեալի, անդամնալի կորստի, անմտութեամբ անցըած կեանքի ամենալաւ տարիների համար, երկուքն էլ ազօտ կերպով հաւատում էին, որ դեռ ամեն ինչ կորած չէ իրանց համար:

Երբ երգեցողութիւնը վերջացաւ, ամբոխի առաջ քարոզելու գուրս եկաւ պաստօր Մէկսուէլ:

Այս անգամ՝ ամբոխը իրան հանգիստ էր պահում. չէին լսուում ոչ ազմուկ, ոչ ծիծաղ և ոչ էլ կոպիտ հանաբներ, ի հարկէ, հասկացել էին, որ էստրադի վրայ հաւաքուած մարդիկը եկել էին իրենց մօտ անկեղծ սիրուց գրգուած, որ այդտեղ բարի գործ է կատարուում և որ «Փարոսը» չէր կարելի գինետուն դարձնել:

Երբ դուրս եկաւ Հռաքէլլ՝ ամենքը առանձնապէս

լարեցին իրենց ուշադրութիւնը՝ նա երգում էր, իսկ Վիրջինիա Պէջը ընկերակցում էր նրան գաշնամուրի վրայ նուագելով. նրա երգը ամբողջովին յափշտակել էր ամբուխին. Հռաքէլը ինքը զգում էր, որ նա այստեղ երգում է այնպէս, ինչպէս երբէք դեռ չի երգել.

Ուղիղ Անկիւնի այդ թշուառ ու կեղաստ բնակիչները յիշեցնում էին նրան վաղեմի մանկութեան մի տխուր պատկեր, Գարնանային մի հրաշալի օր Հռաքէլը մօր հետ զրօսանքի ելած ժամանակ նստել էր քաղաքից գուրս հոս սող գետի ափին:

Գետը նոր էր ազատուել սառուցի կապանքներից և յորդառատ ջրերով ծածկել էր ցածրիկ ափերը:

Երեկոյեան դէմ էր. մայր մանող արել ներկել էր ամպերը պայծառ կարմիրով. Մեզմ փշում էր գարնանային ախորժելի զեփիւռը:

Իրանցից մի վերստ հեռու, քաղաքային այգում զրօսանք կար. Այստեղ հնչում էր երաժշտութիւնը և նրա ձայները հասնելով գետի այս ափը հանգչում էին այստեղ քնքշութեամբ գգուելով մարդու սիրտը Յանկարծ գետի միւս ափից լսուեցաւ մի սարսափելի սիրտ կտրասող աղաղակ. «Աղատեցէք, օգնեցէք»:

Խեղդուում էր մի հարբած մարդ. Այն ափում ոչ ոք չկար, իսկ այս ափում միմիայն Հռաքէն էր իւր մօր հետ. Ոչ մի կերպ օգնելու հնար չկար. Իրանք տեսնում էին, թէ ինչպէս խեղճը կռուում էր ալիքների հետ, լսում էին նրա աղաղակները, իսկ իրանք յուսահատ շարժումներ էին անում, սակայն ոչ մի հնարաւորութիւն չունէին օգնութեան հասնելու:

Վերջապէս խեղճ մարդը ցնցողաբար շարժեց ձեռքերը և ծածկուեցաւ ջրի տակ.

Գետը առաջուայ պէս գլորում էր իւր պղտոր ալիքները. մուժը աւելի թանձը կերպով իջնում էր երկրի վերայ, իսկ քաղաքի այգուց լսուում էին պարերգի ուրախ հնչիւնները:

Այստեղ, Գրէյի ըարակում, Հռաքէլին թւում էր, որ

կեանքը նոյն պղտոր ջուրն է, որ ինքը նստած է գետի
մի ափին Քաղաքի կետրօնում տիրում է ուրախութիւն,
նուագում է երաժշտութիւնը, լուսում է երգեցողութիւն,
իսկ միւս ափին պղտոր ալիքների մէջ թըպրտում է ոչ
թէ մի մարդ, այլ ամբողջ Ուզիղ Անկիւնը, հարիւրաւոր,
հաղարաւոր այդպիսի թաղեր։ Նրանք նոյնիսկ չեն աղա-
ղակում կամ եթէ աղաղակում էլ են, նրանց ձայնը չի
համնում այստեղ. բայց Հռաքէլը տեսնում է, որ նրանք
կորչում են, որ ոչ մի տեղից օգնութեան հասնող չկայ,
և ինքը սարսափահար յուսահատական շարժումներ է
անում։ Նա ուզում է օգնել խեղդուողներին, կամենում
է փրկել նրանց և դուա համար միմիայն մի միջոց ունի
իւր ձայնը, իւր երգը Ուստի և նրա երգի մէջ լսուում
էին թէ կորստեան սարսափ, թէ կարեկցութիւն դէպի
կորչողները, թէ աղերս առ Աստուած փրկութեան համար։

Երգեցողութեան կիսում նա յանկարծ կանգ առաւա-
նրա ձայնը խեղդուեցաւ. սաստիկ յուզմունքից նրա կո-
կորդը ճնշուում էր և ոկոեց բարձրաձայն հեկեկալ։ Նրա
հետ միասին հեկեկալ ոկոեցին նաև շատերը ամբոխից։
Առանձնապէս գառն կերպով լալիս էր մի երիտասարդ-
աղջիկ։ Նա հազիւ 18—19 տարեկան կը լինէր, սակայն
Ուզիղ Անկիւնը կարողացել էր արգէն իւր անմաքուր
կնիքը դնել նրա վրայ։

Երգեցողութեան ընթացքում նա իւր ացքերը չէր հե-
ռացնում Հռաքէլից և Վիրջինիայից։ Նրան, կարծես, զար-
մացնում էր այդ մաքուր, քնքոյց աղջիկների տեսքը, որոնք
սակայն զգուանքով չէին խուսափում Ուզիղ Անկիւնի ան-
մաքրութիւնից, այլ գալիս են այդտեղ, կամենալով որ և է
կերպ օգնել նրանց։

—Բայց միթէ կարելի է մի բանով օգնել մեզ,—մտա-
ծում էր խեղճ աղջիկը։ —Այ, օրինակ, ես, միթէ հնարաւո՞ր
է, որ ես փօխուեմ։ Կարելի է մտածել, որ ես նորից մա-
քուր կը գառնամ։ Զէ որ ես կորած եմ։

—Եթէ այդպէս է, հաղա ինչո՞ւ են եկել այստեղ այդ-
մաքիկը, —կը կին հարց էր տալիս իրեն թշուառ աղջիկը։

— Նշանակում է, նրանք կարծում են, որ մենք գեռ բոլորովին կորած չենք, որ գեռ յոյս կայ փրկուելու, Միթէ այդ ճշմարիտ է, միթէ ես կարող եմ դուրս գտն այն ցեխից, որի մէջ խրուտած եմ։

Եւ թշուառ աղջիկը աղօթում էր, աղօթում էր ջերմութեամբ, մաքրուելու, առաջուայ պէս մաքրուր դառնալու սաստիկ տեհնչով։ Վիշտը ճնշում էր նրա սիրտը, արտասուրը խեղզում էր նրան։ Մոռանալով իրեն, նա բռնեց Հռաքէլի ոտները և ոկսեց հեկենկալ նրա հետ միասին։

Վիրջինիա Պէջը ժօտեցաւ երկու լացող աղջիկներին, թշուառ աղջկան բարձրացրեց գետնից և ոկսեց հանգստացնել նրան ու Հռաքէլին։

Ունկնդիրների վրայ այս տեսարանը սաստիկ աղդեց։ Նրանք առաջին անգամն էին տեսնում, որ երկու մաքուր և լաւ հագնուած աղջիկներ բարձր դասակարգից համբուրում ու մխիթարում են մի թշուառ աղջկայ, որպէս հարազատ քրոջ։

Պաստօր Մէկսուէլը հասկացաւ ամբոխի տրամադրութիւնը և կրկին տնգամբ խօսքը ուղղեց ունկնդիրներին։

— Այս բարեկամներ, մենք չենք եկել այստեղ ձեղ դուարճայնելու և ձեր լսելիքը երգեցողութեամբ ու ճառ ուերսվ պարարելու։ Մենք եկել ենք այստեղ ձեղ գործի կոչելու։

Մի անգամ ականատես եմ եղել սարերի վրայ, թէ ինչպէս ամբոխը բարձրանում էր դէպի լերան դադաթը ձանապարհը դժուարին էր, դարիվերը շատ թեք, մենակ հնար չկար բարձրանալու։ Ովքեր աւելի պինդ ոտներ և ուժեղ ձեռքեր ունեին, առջենից էին գնում։ Միւսները գնում էին նրանց յետեից։ Առջենից գնացողները քաշում էին յետեից եկողներին, իսկ սրանք պաշտպանում էին առջենից գնացողներին։ Այսպիսով փոխագարձ օգնութեամբ ամենքն էլ կամաց կամաց դէպի վեր էին բարձրանում, մինչև որ, վերջապէս, հասան լերան գագաթը։

Այստեղ մեր առջե այդ տեսակ մի ճանապարհ կայ անցնելու։ Մենք ամենքս էլ չափից դուրս ցած ենք իջել։

սղէոք է դէպի վեր բարձրանալ, իսկ այդ աւելի լաւ կարելի է անել ընդհանուր ուժավ։ Պէտք է ամենքս էլ դիմենք գէպի դարիվերը։ մենք բարձրանանք և միւսներին էլ քաշենք մեր յետելից։

—Մենք այդ գործի համար չափաղանց թոյլ ենք, — գուցէ առեք դուք ինձ։

—Անմիտ առարկութիւն, — կը պատասխանեմ ես ձեզ։ Մըջիւնը ձեզնից ուժեղ չէ, սակայն նա ես հատիկ է տառնում՝ գէպի իր բոյնը։ Մարդն ևս պարտական է գէթքարւոյ մի հատիկ ձգելու մարդկային շտեմարանի մէջ։ Եւ Աստուծոյ արդարութեան այդ հատիկը երկրի վրայ ձեռք բերելին ու մարդկանց առլը այնքան էլ գժուար չէ, որքան այդ թուում է մեզ։

Դեր առեք կայծը. ի՞նչ բան է դա, փայտի մի փոքրիկ կտոր, որ կրակ դառնալով լոյս է տալիս և կարող է մեծ խարոյկ վառել։

Ի՞նչո՞ւ ձեզնից ամեն մէկը մի այդպիսի կայծ չինի. գուը կարծղ էք լինել, գեռ այդ քիչ է, դուք պէտք է լինէք լուսատու կայծեր, եթէ ես կամ մի ուրիշ քահանայ մտնենք գինետուն կամ հարրած թուղթ խաղացողների մի ժողովատեղի, գուցէ շփոթուեն, քաշուին մեզնից, բայց այնքան էլ չեն լոիլ մեզ։ Ամեն ի՞նչ իր տեղն ու ժամանակն ունի. Իսկ ձեր մուտքը այդպիսի տեղեր ոչ ոքի չի շփոթիլ և չի դարձացնիլ։ Դուք հանգարատութեամբ մօտենալով մէկին, միւս սին, երրորդին, կարող էք տաել։

—«Բարեկամ, ի՞նչ ես կարծում, Աստուած մեզ նրա համար է ստեղծել, աշխարհ ուղարկել, որ մենք շարունակ գիշեր ցերեկ գենետներում ու խաղատեղերում ընկած լինենք։ Միթէ մենք ուրիշ գործ չունենք կատարելու։ Անշուշտ ունինք, չէ որ տանը կինդ, երեխաներդ, կամ պառաւ մայրդ անհամբեր սպասում են, թէ երբ տուն կըդայ իրենց ինամող — կերաւկրողը, կշռիր քո այստեղի ուրախութիւնը և նրանց այնտեղի վիշտը. կարծեմ տարբերութիւնը շատ մեծ էըլլինիս։

Անշուշտ շատերը կըծիծաղեն ձեր խօսքերի վրայ,

կըհայինոյեն ձեզ, Բայց մի վրդովուիք, կըդանուի մէկը, որի սրտի վրայ կազդեն ձեր խօսքերը, Երեակայեցէք, որ աշնան մի անձրեային ցուրտ գիշեր գուք դանուում էք դիակեներով ծածկուած պատերազմի դաշտում, Շատերը նրանցից մեռած են, ննջում են յաւիտենական քնով, բայց նրանց մէջ կարող են գտնուել գեռ կեանքի նշոյլ ցոյց տուող քանի մի հոգի, Եթէ նրանց ժողովող ու օգնութիւն ցոյց տուող լինի, նրանք կըկենդանանան, Միթէ չարժէ հէնց այդ մի քանի թշուառների, թէկուզ երկուսի—երեքի, համար շրջել ամբողջ պատերազմի դաշտը:

Խոկ ինչէ ներկայացնում գինեաներով ու այլ կասկածելի նկուզներով լի Ուզիդ Անկիւնը, Եթէ ոչ կեանքի կոռուի մէջ ընկած մարդկանցով ծածկուած պատերազմի մի դաշտ Միթէ մենք անտարեր սրտով պէտք է թուզնենք անդարձ կորածների մէջ նաև նրանց, ովքեր դեռ կարողութիւն ունին ոտի կանգնելու:

Այդ տեսակ թշուառների համար մեր «Փարոսը» կըլինի բժշկական օգնութեան կենդրոն, Ում որ հարկաւոր է հոգ գեոր օգնութիւն, նեցուկ, եկէք այստեղ, միշտ կըդանէք այստեղ ձեզ սիրող ու օգնելու պատրաստ եղբայրներ, Բայց գլխաւորապէս ինքներդ եղէք օգնողներ, աշխատեցէք օգնել ուրիշներին, Այստեղ Աստուածային կրակից պաշար առէք ձեզ համար և լուսատու կայծեր եղէք Ուզիդ Անկիւնի մուժ խորշերում:

Մութ է այստեղ, Ուզիդ Անկիւնում, մութ է ընդհանրա պէս նաև մեր կեանքում, Շատ լոյս է հարկաւոր ի մի հաւաքուենք ամենքս որպէս կայծեր և լուսատու մեծ խարոյկ կազմենք:

Անցեալ ժողովում ես հարցրի ձեզ, համաձայն էք արդեօք «Փարոս» յաճախելու, Դուք պատասխանեցիք, «այն» Այժմ ես հարցնում եմ:

— Զկան արդեօք ձեր մէջ այնպիսիները, որոնք կուզենային լուսատու կայծ լինել Ով որ ուզում է օգնական լինել մեզ, ժողովից յետոյ թող մնայ այստեղ:

Այստեղ Մէկսուէլը համառօտակի պատմեց ունկնդիր-

ներին իւր խմբի ծագման պատմութիւնը, թէ ինչպէս առաջ եկաւ այդ խումբը և թէ ինչպէս իրենք, այդ խմբի մեղամբները, այստեղ, Ռւզիդ Անկիւն, եկան։

— Մեզ ուշըի ընթեց մեր կորած թշուառ եղբայրը, մի բանուոր Մենք եկանք ձեզ մօտ զգաստացուցիչ խօսքերով։ Գնացեք և դուք սիրոյ և արդարութեան խօսքերով ձեղ շրջապատող կեանքի մէջ և զգաստացրէք դինու որատներից թմրած մարդկանց։

Ժողովը փակուեցաւ ընդհանուր երգով որից յետոյ ամենը սկսեցին ցրուել և բարտքը հետզհետէ դատարկուեցաւ։ Երբ բոլորը դուրս եկան, Մխոտածը, որ կուչ էր եկել մի անկիւնում, յուզուած մօտեցաւ Մէկսուէլին։

— Դուցէ դուք ինձ յիշեք, պաստօր ևս Մխոտածն եմ Անցեալ անդամ ես ձեզ հետ խօսեցի այստեղ։ Այն ժամանակ ես խմած էի և ձեր խօսքերի ազդեցութիւնը ինձ վրայ շատ կարճատե եղաւ Հէնց նոյն երեկոյեան ևս զողուժեան նոր ծրագիր կազմեցի։ Գնացի այն երիտասարդ օրիորդի մօտ, որ այստեղ երգում էր, և օգնութիւն խնդրելու պատրուակով, կամենում էի դիտել, թէ գիշերը ինչ ճանապարհով յարմար էր մտնել այդտեղ։

Ես կարծում էի, որ օրիորդ Վինտօուն դուրս կը գար նախասենեակը, կամ գուցէ մի միայն ծառայի միջոցով կը պատասխանէր ինձ Բայց այդպէս չեղաւ։ Օրիորդը ինքը դուրս եկաւ, իսկոյն ճանաչեց ինձ և տարաւ հիւրանենեակը։ Այնտեղ նա ինձ նստեցրեց և սկսեց հարց ու փորձ անել, կարծես թէ ես նրա եղբայրն էի, որին նա վաղուց չէր տեսել։ Ես ամօթու կարծրեցի իմ չարդիտաւորութեան համար և չէի իմանում, թէ ինչ եմ խօսում։

— Դուք ոյն Զօնն էք, որ այնպէս լաւ խօսում էր բարտքում իւր մանկութեան մասին, — ասաց նաև ի՞նչ էք կամենում գուք, գնրծ, այդ հեշտութեամբ կարելի է դտնել։ Միայն ահա թէ ինչ խորհուրդ կը տայի ձեզ, ես կարծում եմ, լաւ կը ինքու ձեղ համար մի առժամանակ հեռանալ քաղաքից։ Գիտէք, թէ ինչպէս հիւանդ կուրծք ունեցողների համար օդ տակար է գիւղական մաքուր օդը, նոյպէս և ձեզ

համար օգտակար կը լինի դիւզում ապրելը, մինչև որ հոգով միանգամայն կազդութեամբ ես այս րոպէիս մի նամակ կըտամ ձեզ հօրեղբօրս անունով. նա դիւզում մեծ կալուած ունի և ձեզ գործ կը տայ այնտեղ. ձանապարհածախը ևս կըտամ ձեզ և լաւ կը լինի որ հէնց այսօր և եթ գնաք. ես հաւատացած եմ, որ դուք լաւ բանուոր կըլինիք:

Նա հաւատացած էր, որ ես կարող եմ լաւ մարդ դառնալ. Նա ինձ ճանապարհածախը էր առաջարկում... իսկ ես եկել էի նրա մօտ, որպէս գող ես չդիմացայ, ծունկ չոքեցի նրա առաջ և արտասոքը աչքերիս ասացի:

— Ներեցէք ինձ, օրիորդ, ես դող եմ, եկել եմ այսաւեղ գոզութեան նպատակով. դաւրս քշեցէք ինձ,

Ես պատմեցի, թէ ինչի համար էի եկել նրա մօտ. Նա բոլոր ուշադրութեամբ լսեց և ձեռքը ուսիս դնելով ասաց:

— Խեղճ Զօն, երեսում է, թէ որչափ ծանր է եղել ձեր կեանքը. և չնայած դրան դեռ ինչպէս լաւ հոգի ունիք. Դուք կարող էք աւելի լաւ մարդ դառնալ, քան էք այժմ.

Օրիորդի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ՝ ես ինձ միագամայն ուրիշ կերպ եմ զգում, ես այժմ զզուում եմ գինետնից և օղուց, ուզում եմ լաւ բան անել, ես այժմ սարսափում եմ իմ անցեալից:

Այս վերջին օրերը շարունակ ներսս այրուում էր, ես անհամբեր սպասում էի այսօրուայ ժովովին, ուզում էի խօսել ձեզ հետ, խորհուրդ հարցնել, իսկ դուք հէնց ինք ներդ խօսեցիք այսօր կայծի մասին:

Այն ժամանակ ես, անկիւնում կանգնած, ասացի ինքս ինձ:

Այլ ես Մխոտած չկայ: Մխոտածը մեռաւ. նրա վրայ խաչ է դրուած: Այժմ կայ Զօն մօկս և այդ մօկսը կայծ կը լինի: Միայն թէ օգնեցէք ինձ, պատոր, վառեցէք այդ կայծը Աստուածային կրակով:

— Զեր մէջ կայ այդ կրակը. սիրելի Զօն: Աստուածային կրակը վառուել է ձեր հոգու մէջ և բորբոքում է, — ուրախանալով ասաց Մէկսուէլը: — Պահպանեցէք միայն այդ

կրակը և մի թողէք, որ հանգչի»

Ապա Ֆօկան ու Մէկսուէլը մի ժամի շափ խօսեցին իրար հետ։ Բանից դուրս եկաւ, որ Զօնը կարող էր լաւ ատազձագործ լինել, որ նա վաղուց սովորորել էր այդ արհեստը բանտերից մէկուժ։ Ուստի և նոքա որոշեցին, որ Զօնը Մէկսուէլի և Դրէյի օգնութեամբ Ուղիղ Անկիւնում իւր համար գործ կդրտնի և դրա հետ միասին օգնական կը լինի բարաքում աշխատողների համար։

—Եկեղեցու զանդակատանը շատ զանդակներ կան, — ասաց Զօն Ֆօկաս։ —Կան մեծ զանդակներ, կան և փոքրերը։ Մեծերը շատ ուժգին ձայն ունին ու հեռուից ևս լուսում են, բայց շնորհական գործ ածուռում, առանձնապէս կարեռը դէպքերում։ Իսկ փոքրերը զօրեղ ձայն չունին, բայց միշտ գործ են ածուռում։

Դուք, պաստօր Մէկսուէլ, և ձեր բարեկամները, որոնք գալիս են այստեղ, մեծ զանդակներն եք։ Ձեր խօսքն ու ազգեցութիւնը մեծ է, բայց դուք միշտ այստեղ, Ուղիղ Անկիւնումը չէք. իսկ ես, Զօն Ֆօկաս, նախկին թափառաշրջիկ հարբեցողս, փոքր զանդակն եմ, և ես, թէև անզօր, բայց շարունակ պէտք է հնչեմ և յիշեցնեմ մարդկանց Աստուծոյ արդարութեան, զգաստ և մաքուր կեանքի մասին։

—Եւ տայ Աստուած, որ ձեր ձայնը արձագանք գտնէր շատ մարդկանց մէջ, — ասաց Մէկսուէլ, — որ ձեր կայծի վրայ աւելանային նաև ուրիշները և որ այստեղ, Ուղիղ Անկիւնում վառուէր Աստուածային կրակի մի մեծ խարոյէ։

Տուս. թարգմ. Մամրէ վարդապետ.